ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻՆ ԱՂԵՐՍՎՈՂ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Ականավոր հայագետ եւ բյուզանդագետ Նիկողայոս Ադոնցի (1871-1942) բազմաբնույթ գիտական ժառանգության ուրույն եւ չափազանց հետաքրքիր մի բնագավառն են Հայկական հարցին նվիրված նրա ուսումնասիրությունները: Մինչեւ վերջերս գիտական հանրությանը հայտնի էր միայն նրա՝ Հայկական հարցին նվիրված 1920 թ. Լոնդոնում անգլերենով հրատարակված գիրքը[1]: Ավելի ուշ՝ 1990-ական թվականներին, արխիվային հայտնագործությունների շնորհիվ ի հայտ եկան նաեւ խնդրո առարկա բնագավառին նվիրված պատմաբանի մեկ տասնյակից ավելի հոդվածներ, հուշագրեր եւ պատրաստած փաստաթղթեր: Առկա ամբողջ նյութը 1996 թ. լույս տեսավ մեկ գրքով[2]: Անցած տարիների ընթացքում հայտնաբերվեցին նոր նյութեր, հիմնականում հուշագրեր եւ նամակներ, որոնք մեկ անգամ եւս վկայում են, թե ականավոր պատմաբանը զուտ գրասենյակային գիտնական կամ զուտ լսարանային դասախոս չէր, նա լայն առումով միաժամանակ նաեւ ազգային ու հասարակական գործիչ էր: Ադոնցը երբեք չմնաց հայ կյանքը հուզող խնդիրներին կողքից դիտողի ու դիտողություններ անողի դերում:

Ն. Ադոնցի ազգային գործունեության բուռն դրսեւորման մի շրջան էին 1912-1913 թվականները, երբ հայ հասարակական-քաղաքական կյանքում վերստին սկսում են փայփայվել Հայկական հարցի վերաբացման վերաբերյալ գաղափարները: Նա ամենագործուն մասնակցությունն է ունեցել այդ կապակցությամբ Ս. Պետերբուրգում կազմակերպված խորհրդակցություններին ու հանդիպումներին: Զարմանալի հետաքրքիր է, որ ռուսական կառավարության հանձնարարությամբ նա ու Գրիգոր Տիգրանյանը 1912 թ. դեկտեմբերի վերջերին այցելել են Կ. Պոլիս եւ այստեղ բազմաթիվ հանդիպումներ ունեցել պոլսահայ ազգային նշանավոր գործիչների հետ:

Ստորեւ ներկայացվող նամակները վերաբերում են հենց այս իրադարձություններին: Նամակներից առաջինն ուղղված է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Ե Սուրենյանցին, որ, ինչպես հայտնի է, կարեւորագույն դերակատարություն է ունեցել Հայկական հարցի վերաբացմանը վերաբերող եղելություններին: Երկրորդ նամակի հասցեատերը հայտնի հասարակական գործիչ, գրող եւ խմբագիր Արշակ Զոպանյանն (1872-1954) է, որ փարիզահայ միջավայրում եղել է Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով ստեղծված Ազգային պատվիրակությանն աջակցող գործունյա դեմքերից մեկը:

Հրապարակվող նամակներից ակներեւ է, որ Ն. Ադոնցը կարեւորագույն մասնակցություն է ունեցել 1912-1913 թթ. Հայկական հարցի շուրջ ծավալված դեպքերին, որը վկայում է նրա վաստակած հեղինակության եւ իմացական կարողությունների մասին:

Նամակները, որոնց բնագրերը գտնվում են ՀՀ Ազգային արխիվի եւ Մատենադարանի արխիվային բաժնի ֆոնդերում, տպագրվում են անհրաժեշտ կետադրական միջամտություններով:

Պ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

---

1 **N. Adontz**, Towards the Solution of the Armenian Question, London, 1920 (երկրորդ տպագրություն՝ Եր., 2007, ռուսերեն թարգմանություն՝ Եր., 1984, հայերեն թարգմանություն՝ Եր., 1989):

2 **Նիկողայոս Ադոնց**, Հայկական հարց, կազմել, ծանոթագրել եւ ներածությունը գրել է Պ.Հ. Հովհաննիսյանը, Եր., 1996:

1.

Ի ԴԻՒԱՆ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒ Հ[ԱՅՐ] ԴԻՒԱՆԱՊԵՏ[1],

ինչպէս Ձեզ արդէն յայտնի է, մայրաքաղաքիս հայ հասարակութեան բանիբուն անդամների մասնակցութեամբ քանի ժամանակից ի վեր առանձին խորհրդակցական զումարումներ են տեղի ունենում պարբերաբար Հայոց խնդրի առթիւ[2]: Անցեալները նոյն խորհրդակիցների նախաձեռնութեամբ երկու անձն ուղարկուեցին Կ.Պոլիս ինչ-ինչ յանձնարարութեամբ, որ եւ վերադառնալով ներկայացրին մանրամասն զեկուցումն իրենց երթի հետ կապուած խնդիրների վերաբերեալ, թէ՛ բանաւոր եւ թէ՛ գրաւոր[3]: Ներկայ գրութեանս հետ միաժամանակ ղրկւում է դիւանիդ նրանց հաշուետուութեան պատճէնից երկու օրինակ ի պէտս Նորին Վեհափառութեան բարձր ուշադրութեան[4]:

Այլ եւ հարկ եւ պարտք եմ համարում յայտնել Ձերդ Արժանապատուութեան, որ յիշեալ Խորհրդակցութեան կից կազմուած է տնօրէն մարմին հետեւեալ չորս անձերից՝ [Պետական] Դումայի պատգամաւոր Մ. Պապաջանեան[5], Պ. Ղուկասեան[6], Գ. Տիգրանեան[7] եւ Ն. Ադոնց, որին եւ դիմելու է հարկաւոր դէպքում՝ անհրաժեշտ եւ գործի համար օգտակար յարաբերութիւնը պահպանելու համար:

Խնդրելով հայրութեանդ օրհնութիւնը,
մնամ խոնարհ՝
Ն. ԱԴՈՆՑ

P.S. Գրութիւններդ կարելի է ուղարկել իմ անուան՝
[Ս.Պետերբուրգի] Եկեղեցական խորհրդի
հասցէով:

[1913] 15 մարտի, Ս.Պ[ետերբուրգ][8]:

Մաշտոցի անվ. Մատենադարանի արխիվային բաժին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիվան, ֆ. 57, ց. 2, գ. 685, թ. 46:



Մի էջ ձեռագրից

2.

ԱՋՆԻՒ ԲԱՐԵԿԱՄ ՊԱՐՈՆ ՉՈՊԱՆԵԱՆ,

Այսօր[9] հեռագրով հաղորդեցինք Ձեզ երեկուայ մեր Խորհրդակցութեան[10] արդիւնքը այն հարցի վերաբերեալ, որ յարուցել էիք վերջին գրութեամբդ: Ցանկացածդ կամ առաջարկածդ մասնախումբը հայասէր ռուս գործիչներից բաղկացած, փակաւին գոյութիւն չունի եւ դժբախտաբար նոյնիսկ յայտնի չէ, թէ կը յաջողուի մօտիկ ապագայում կազմակերպել այդպիսի մի մարմին:

Առայժմ սրիպուած ենք կանգ առնել առանձին-առանձին անհատների վրայ: Մեր Խորհրդակցական ժողովի կարծիքով, քանի մի անձինք միայն կարող են յանձնարարուել վստահօրէն յիշածդ նպատակի համար՝ պ. պ. յայտնի պրոֆ. Մակսիմ Կովալեւսկին[11], Ալեքսանդր Գուչկով[12]՝ նախորդ Դումայի ականաւոր պատգամաւորը եւ երբեմն նախագահը, այլեւ նոյնպէս քաջայայտ պարոն Միլիւկովը[13]: Ի նկատ առնելով, որ վերջինս իբր գործիչ եւ Դումայի անդամ ձախակողմեան հոսանքների ներկայացուցիչ է, եւ ուրեմն կառավարչական շրջանակներում եւ յարակից հասարակական ազդեցիկ խաւերում ոչ բնաւ վստահելի անձն, Խորհրդակցութիւնս նախամեծար համարեց առաջին երկու անունները եւ առաւելապէս Մակսիմ Կովալեւսկուն:

Պ[արոն] Մ. Կովալեւսկին եւս աջակողմեաններին չէ պատկանում, բայց նա իր գիտական եւ հասարակական գործունէութեամբ առանձին եւ բաւականին հեղինակաւոր դիրք է ստեղծել պայքարող կուսակցութիւններից մեկուսի եւ որոշ համբաւ ունի նաեւ արտասահմանում, մասնաւորապէս այն մարդկանց շրջանում, որոնցից մեր ենթադրութեամբ պիտի կազմուի Լոնդոն գումարելի ժողովը[14]: Ահա՛ այս նկատումով ժողովս միաձայն որոշեց դիմել նորան յիշեալ խնդրով: Բայց երեւաց, որ նախօրէին մեկնել է Պարիս՝ շտապեցինք հեռագրել Ձեզ, որ պ[արոն] Լորիս-Մելիքեանի[15] հետ, որ նրա անձնական բարեկամութիւնն է վայելում, յանձնառու լինիք խօսիլ պ[արոն] Կովալեւսկու հետ եւ յայտնել նրան մեր խնդիրը: Լիայոյս ենք, որ ամեն ճիգ գործ կը դնէք դիմումը յաջողութեամբ պսակելու:

Շատ կը փափագէինք, որ չդժուարանայիք կայանալի գումարման մասին աւելի որոշ տեղեկութիւններ յայտնել մեզ, թէ՛ ժողովի կազմի, թէ՛ մերձաւոր նպատակի եւ թէ՛ հաշուի առած ակնկալութիւնների, եթէ ոչ գործնական արդիւնքի վերաբերեալ: Մեծապէս կը խնդրէինք նաեւ պարզել մեզ մասնախմբիդ իրական առընչութիւնը կաթուղիկոսական պատգամավորութեան[16] հետ, որպէսզի կարողանայինք վերահասու լինել, որդեօ՞ք բոլոր գրութիւններս ու յարաբերութիւններս պէտք է մասնախմբիդ ուղղել, թէ որոշ դէպքերում դիմելու նաեւ անմիջապէս պատգամաւորութեան նախագահին[17]:

Աւելորդ չենք համարում յիշել, ինչ որ արդէն գրած էինք Վսեմապատիւ փաշային ուղղած գրութեանս մէջ: Մայրաքաղաքումս տեղի են ունենում պարբերաբար խորհրդակցական նիստեր տեղիս հասարակութեան ընտիր եւ բանիմաց անդամների մասնակցութեամբ:

Վերջերս ժողովս ընտրել է տնօրէն մարմին չորս հոգուց բաղկացած՝ պ. պ. Մ՝իքայէլ Պապաջանեան - Դումայի պատգամաւոր, Պօղոս Ղուկասեան, Գրիգոր Տիգրանեան եւ Նիկողայոս Ադոնց:

Յարգալից ողջոյններով ի դիմաց տնօրէն մարմնի՝
Ձերդ Ն. ԱԴՈՆՑ

Հասցէ Conseil de l'Eglise Arménienne.
Կամ Գրիգոր Տիգրանեանի եւ
կամ իմ անունով:

9 ապրիլի [1913 թ.]
Ս. Պ[ետերբուրգ]
P. S. [Գրիգոր] Տիգրանեանի մասնաւոր հասցէն՝
Фонтанка 64.
Казанская ул.8, кв.85.

ՀՀ ԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 6:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Նամակն ուղղված է Մայր Աթոռի դիվանապետ Բագրատ վարդապետ Վարդազարյանին (1869-1938): Բագրատ վարդապետն ավարտել է Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանը և Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1912-1916 թվականներին եղել է Գևորգյան ճեմարանի տեսուչ, Մայր Աթոռի դիվանապետ, Վանական խորհրդի անդամ: Տարբեր գարիներ զբաղեցրել է Հնդ-իրանական, Շամախու և Ասպրախանի թեմական առաջնորդի պաշտոնները:

2 Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ն իր գահակալությունից անմիջապես հետո դիմել է ռուսական կառավարությանը (2 հոկտեմբերի, 1912) և անձամբ Նիկոլայ II-ին (24 դեկտեմբերի, 1912) Հայկական հարցը վերաբացելու խնդրանքով : Ստանալով ռուսական կառավարության դրական վերաբերմունքը՝ կայսրության տարբեր հայաշատ կենտրոններում, այդ թվում և Ս. Պետերբուրգում, ստեղծվել են Հայկական հարցի արծարծմանը աջակցող կոմիտեներ: Այստեղ խոսքը վերաբերում է 1912 թ. նոյեմբերի կեսերին Ս. Պետերբուրգի Հայկական խմբակի նախաձեռնությամբ հրավիրված խորհրդակցությանը:

3 Ակնարկը վերաբերում է Գրիգոր Տիգրանյանի և Նիկողայոս Ադոնցի ուղևորությանը (դեկտեմբեր 1912 - հունվար 1913) Կ.Պոլիս (այդ ուղևորության մանրամասների և ձեռք բերած արդյունքների մասին տե՛ս **Ն. Ադոնց,** Հայկական հարց, կազմել, ծանոթագրել և ներածությունը գրել է Պ. Հ. Հովհաննիսյանը, Եր., 1996, էջ 25-49):

4 Այդ փաստաթուղթը, որ հայտնի է «Հայկական հարցի շուրջ Թուրքիայում. Հաշվետվություն Ս. Պետերբուրգի Հայկական խմբակի կողմից նրա երկու գործուղված անդամների Կոստանդնուպոլիս կատարած ուղևորության մասին» վերտառությամբ, այժմ պահվում է Մաշտոցի անվ. Մատենադարանի արխիվային բաժնում (տե՛ս Կաթողիկոսական դիվան, թղթապանակ № 238, վավերագիր 95, թ. 1-17):

5 Միքայել Հովհաննեսի Պապաջանյան (1868-1929), Ռուսաստանի IV Պետական դումայի (1912-1917), Անդրկովկասյան Հատուկ կոմիտեի (1917) և Հայոց Ազգային պատվիրակության (1919-1922) անդամ:

6 Պողոս (Պավել) Հովսեփի Ղուկասյան (1860- ?), նավթարդյունաբերող, «Բաքվի նավթարդյունաբերողների համագումարի» նախագահ, Ռուսաստանի պետական խորհրդի անդամ (1906-1917), ազգային բարերար:

7 Գրիգոր Թադևոսի Տիգրանյան (1859-1930), հասարակական-մշակութային գործիչ, Ս. Պետերբուրգի հայկական խմբակի ղեկավարներից:

8 Ինչպես ցուցում է Մայր Աթոռի դիվանապետ Բագրատ վրդ. Վարդազարյանի մակագրությունը, սույն նամակը ստացվել է 1913 թ. մարտի 22-ին :

9 Այսինքն՝ 1913 թ. ապրիլի 9-ին:

10 Նկատի ունի Ս. Պետերբուրգի Հայկական խմբակի նախաձեռնությամբ ստեղծված Հայկական հարցի վերաբացմանը աջակցող խորհրդակցական ժողովը:

11 Մաքսիմ Կովալևսկի (1851-1916), ռուս նշանավոր պատմաբան, ազգագրագետ, սոցիոլոգ: Ռուսաստանի I Պետական դումայի (1906-1907) և Պետական խորհրդի (1907) անդամ, Սահմանադիր-միապետական կուսակցության հիմանդիր և նախագահ:

12 Ալեքսանդր Գուչկով (1862-1936), Ռուսաստանի III Պետական դումայի

նախագահ (1907-1912), Օկտյաբրիստների կուսակցության պարագլուխ, Ժամանակավոր կառավարության ռազմա-ծովային ուժերի նախարար (1917):

13 Պավել Միլյուկով (1859-1943), պատմաբան, հրապարակախոս, Կադետական կուսակցության նախագահ, Ժամանակավոր կառավարության արտաքին գործերի նախարար (1917 թ. մարտ-մայիս):

14 1913 թ. երկրորդ կեսին նախատեսված էր Լոնդոնում հրավիրել Եւրոպայի հայասեր գործիչների կոնֆերանս՝ նվիրված Հայկական հարցին:

15 Խոսքը բժիշկ Հովհաննես Լորիս-Մելիքյանի մասին է : Ավարտել է Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Եղել է ՀՅ Դաշնակցության հիմնադիրներից, աշխատակցել է «Դրոշակ» հանդեսին: Եւրոպական երկրներում զբաղվել է Հայ դատի քարոզչությամբ, հիմնադրել եւ խմբագրել է «Pro Armenia» ֆրանսերեն պարբերաթերթը:

16 Ակնարկը վերաբերում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Ե Սուրենյանցի 1912 թ. դեկտեմբերի 1-ի կոնդակով Հայ դատի պաշտպանության համար Եւրոպայում ստեղծված պատգամավորությանը, որի կազմում ընդգրկված էին Պողոս Նուպար փաշան, Հակոբ Արթին փաշան, Գեւորգ արքեպ. Ուրուճյանը, Մինաս Չերազն ու Հարություն Մոստիչյանը:

17 Այսինքն՝ Պողոս Նուպար փաշային: